ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՖՐԱՆՍԵՐԵՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

2012

ՀՏԴ 373:804.0
ԳՄԴ 74.2+81.2 ֆրանս
Ֆ 857

Կազմողներ՝ ԱՐԱՄ ԲԱՐԼԵԶԻԶՅԱՆ
ԱՐԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՄԵԼԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խմբագիր՝ ԱՐԱՄ ԲԱՐԼԵԶԻԶՅԱՆ

Ֆ 857 Ֆրանսերեն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց,Երևան, Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012. 20 էջ:

Ուղեցույցը նախատեսված է աշակերտների, ուսուցիչների և դիմորդների համար:

Ուղեցույցում ներկայացված է ֆրանսերենի միասնական քննության թեստի երկու նմուշ:

Տրված են նաև առաջադրանքների պատասխանները:

ԳՄԴ 74.2+81.2 ֆրանս

ISBN 978-99941-881-0-9

© Գնահատման և թեստավորման կենտրոն 2012 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Ֆրանսերենի քննության միասնական թեստը բաղկացած է երկու մասից:

Առաջինը (Ա մակարդակ) նախատեսված է հանրակրթական դպրոցի շրջանավարտների համար: Նրանում ընդգրկված 7 առաջադրանքները պարունակում են 50 հարց, որոնք նվազագույն և միջին բարդության են:

Թեստի երկրորդ մասը (Բ մակարդակ) գիտելիքների ավելի խորը իմացություն է պահանջում: Այստեղ ընդգրկված 5 առաջադրանքները պարունակում են 30 հարց:

Միասնական թեստի Ա և Բ մակարդակները նախատեսված են այն շրջանավարտների համար, ովքեր մտադիր են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ինչպես Ա, այնպես էլ Բ մակարդակի յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Պատասխանների ձևաթուղթը ստուգվելու է համակարգչային ծրագրերի կիրառմամբ:

Ուղեցույցում ներկայացված է թեստի երկու նմուշ, զետեղված են նաև թեստերի առաջադրանքների պատասխանները: Յուրաքանչյուր առաջադրանքի վերաբերյալ տրված են բացատրություններ, խորհուրդներ, ցուցումներ, որոնք կօգնեն ապա-գա շրջանավարտին ու դիմորդին լավագույնս նախապատրաստվել քննությանը:

ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեստի բովանդակությունը ամբողջությամբ համահունչ է դպրոցում ուսումնասիրվող նյութին:

Թեստի առաջադրանքները ճիշտ կատարելու համար քննություն հանձնողը պետք է ծանոթ լինի դպրոցական ծրագրով նախատեսված քերականական երևույթներին (տե՛ս ծրագիրը) և բառապաշարին, դասագրքերին ու դրանց վերջում տրված ֆրանսերեն-հայերեն բառացանկերին:

ԾՐԱԳԻՐ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: Ընդհանուր տեղեկություն բառակազմական հիմնական միջոցների՝ բառածանցման և բառաբարդման մասին: Ամենագործածական նախածանցների՝ re-, im-, in-, sur-, dé- և վերջածանցների -age, -é, -erie, -et, -ier, -ment, -esse, -eur, -teur, -ique, -ième, -tion, -ien, -al, -té իմացություն և օգտագործում:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ: Պարզ նախադասություն (բայական և անվանական ստորոգյալով), être բայը որպես հանգույց, շրջադասումով կամ est-ce que-ով կազմված հարցական նախադասություններ, ժխտական նախադասություններ և դրանց կազմությունը, հարցական բառերով կազմված նախադասություններ: Բարդ ստորադասական (տեղի, ժամանակի, պատճառի, պայմանի և որոշիչ երկրորդականով) և բարդ համադասական նախադասություններ: Ուղղակի և անուղղակի խոսք:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ:
ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Սեռը, թիվը:

ՀՈԴ (արտիկլ): Որոշիչ և անորոշ հոդերի գործածությունը: Du, des, au, aux միաձույլ ձևերի գործածությունը: Du, de la, de l’ մասնական հոդերի գործածությունը: Հոդի բացակայության դեպքերը:
ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Որակական ածականների սեռը, թիվը և համեմատության աստիճանները: Ցուցական, ստացական և անորոշ դերանվանական ածականներ:
ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ: Քանակական թվականներ: Դասական թվականների կազմությունը:
ԴԵՐԱՆՈՒՆ: Բայակից (ոչ ինքնուրույն) և ինքնուրույն անձնական դերանունների գործածությունը որպես ենթակա և լրացում: Ցուցական, հարաբերական, ստացական և անորոշ դերանուններ: En, y դերանունների գործածությունը:
ԲԱՅ: I, II, III խմբերի բայերի Présent de l’indicatif, Imparfait, Passé composé, Plus-que-parfait, Futur simple, Passé simple, Futur immédiat, Passé immédiat ժամանակների, ինչպես նաև Conditionnel présent-ի, Subjonctif présent-ի,

Impératif-ի գործածությունը: Դերանվանական բայերի գործածությունը հիշյալ ժամանակաձևերով: Կրավորական սեռ /voix ou forme passive/: Բայի անդեմ ձևերը՝ Infinitif, participe présent, participe passé, gérondif:
ՄԱԿԲԱՅ: Մակբայների տեսակները: Ձևի մակբայների համեմատության աստիճանները: En-ի, y-ի գործածությունը մակբայաբար:
ՆԱԽԴԻՐ: Ամենագործածական à, de, en, dans, par, pour, contre, entre, parmi, sur, sous, avec, sans, avant, après, devant, derrière, depuis, vers, chez նախդիրները:

Բուհ ընդունվողը պետք է կարողանա տեքստի մեջ ճանաչել և հասկանալ ինֆինիտիվով, c'est… qui, c'est… que ուժգնացնող և ne… que սահմանափակող մասնիկներով կառույցները:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

2012 թ. Միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Ֆիզիկաերեն

ազգանուն

անուն հայրանուն

տեղական համար

Լրե՛ք ուշադիր

- Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
- Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն այուևակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
- Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 8

Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ

	I					II					III				
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
a															
b															
c															
d															

	III									
	16	17	18	19	20					
a										
b										
c										
d										

Դատապարտի համարը

	IV										V						VI				
	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
a																				
b																				
c																				
d																				

Դատապարտի համարը

	VII									
	41	42	43	44	45	46	47	48	49	50
a										
b										
c										
d										

Ա մակարդակում փոխված պատասխանների քանակը

a b c d

Դատապարտի համարը

Բ մակարդակ

	VIII					IX										X				
	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70
a																				
b																				
c																				
d																				

Դատապարտի համարը

	XI					XII				
	71	72	73	74	75	76	77	78	79	80
a										
b										
c										
d										

Դատապարտի համարը

Բ մակարդակում փոխված պատասխանների քանակը

a b c d

Ամբողջ ծնաբղբում փոխված պատասխանների քանակը

Պատրաստ եք նախադասությունը՝

Ծանոթ եմ քննության կարգին:

ՊԱՏԱԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Պետական միասնական քննության թեստում ընդգրկված առաջադրանքների պատասխանները նշվում են համապատասխան ձևաթղթում:

Ձևաթուղթը լրացվում է **միայն սև գելային գրիչով:**

Առաջադրանքները ընդգրկում են ենթաառաջադրանքներ: Թվերով նշված է տվյալ առաջադրանքում ընդգրկված ենթաառաջադրանքների քանակը, իսկ տառերով՝ պատասխանների տարբերակները (a, b, c, d): Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի պատասխան պետք է գրել այն նշող թվի սյունակում (1, 2, 3, 4…)՝ համապատասխան տառի դիմաց: Օրինակ՝



Սխալվելու դեպքում քննություն հանձնողը հնարավորություն ունի կատարել 3 ուղղում Ա մակարդակում և 2 ուղղում Բ մակարդակում: Ուղղումն արվում է հետևյալ կերպ. ուղղումների համար նախատեսված հատվածում վերևի 2 մեծ վանդակներում գրվում է այն ենթաառաջադրանքի համարը, որի պատասխանն ուղղվում է, ապա համապատասխան վանդակում կատարվում է նոր նշումը: Օրինակ՝



Որպես պատասխան նշված է եղել b տարբերակը, պետք է լիներ c:

Սխալների ուղղման բաժնի առանձին վանդակում անհրաժեշտ է նշել փոխված պատասխանների քանակը:

Ձևաթուղթը պետք է լրացնել խնամքով՝ ուշադրությամբ հետևելով վերոհիշյալ ցուցումներին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական թեստի բոլոր առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել ճիշտ պատասխանի ընտրությանը:

Հիշեք, որ առաջարկվող պատասխաններից միայն մեկն է ճիշտ:

Հաշվի առեք, որ առաջադրանքները մի դեպքում պահանջում են որևէ իրողություն ճիշտ ներկայացնող տարբերակը գտնել, մյուս դեպքում՝ գտնել սխալը:

Խելամիտ օգտագործեք ժամանակը: Թեստի առաջադրանքներին պատասխանելու համար ձեզ սահմանափակ ժամանակ է տրվում: Քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են և կատարման համար տարբեր ժամանակ են պահանջում, անհրաժեշտ է ժամանակը ճիշտ բաշխել:

Ժամանակ մի վատնեք երկար մտածելով այն հարցերի շուրջ, որոնց չեք կարող անմիջապես պատասխանել: Կատարեք այն առաջադրանքները, որոնց պատասխանները հաստատ գիտեք: Այդպես դուք ավելորդ ժամանակ չեք վատնի, չեք կորցնի ժամանակի զգացողությունը և թեստի՝ ձեր իմացած մյուս հարցերին պատասխանելու հնարավորությունը: Ձեր իմացած բոլոր հարցերին պատասխանելուց հետո, վերադարձեք բաց թողած առաջադրանքներին:

Երբ տեսնում եք, որ ժամանակը մոտենում է ավարտին, և դուք չգիտեք առաջադրանքի ճիշտ պատասխանը, ընտրեք ձեր կարծիքով առավել հավանականը: Հիշեք, որ թե՛ պատասխանը չնշելու և թե՛ սխալ պատասխանի դեպքում դուք միավոր չեք ստանում: Բայց հնարավոր է, որ ձեր կասկածներն անհիմն լինեն, և առավել հավանական թվացող պատասխանն իրոք ճիշտ պատասխանը լինի, որը գրելով միավոր չեք կորցնի:

Թեստի էջերի դատարկ մասերը նախատեսված են սևագրության համար: **Թեստը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է նաև կախված ձեր քննական միավորը: Քննության ողջ ընթացքում կարգապահ եղեք, մի խոսեք և մի խանգարեք ուրիշներին:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

Առաջադրանք I

Նպատակն է ստուգել, թե քննություն հանձնողը որքանով է պատրաստ ընկալել կապակցված տեքստի բովանդակությունը և ընտրել յուրաքանչյուր ենթառաջադրանքի համար տրված 4 պատասխաններից միակ ճիշտը: Ուստի խորհուրդ ենք տալիս նախ ուշադիր ընթերցել տեքստն ամբողջությամբ (անհրաժեշտության դեպքում մի քանի անգամ), հասկանալ այն և դրանից հետո միայն նշել պատասխանը:

Կարդալ տեքստը և նշել յուրաքանչյուր ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը:
Lire le texte et cocher la bonne réponse de chaque question.

Antoine vient de s'endormir après une journée fatigante. Sa femme, qui dort à côté de lui le réveille et lui dit:

-Le téléphone sonne, en bas. A cette heure-ci, c'est certainement pour toi. Va voir ce que c'est.

Ceci dit, elle s'allonge et se rendort. Cependant le malheureux Antoine saute du lit et descend lentement l'escalier.

Un moment après, il remonte et va taper (խփել) sur l'épaule de sa femme.

- Qu'est-ce que c'est? s'écrie-t-elle.

Il explique:

- Tu sais, le téléphone, ce n'était pas pour moi.

Elle, mécontente, met ses pantoufles (հողաթափերը), sa robe de chambre et se dirige vers la porte.

Lorsqu'elle l'ouvre, Antoine ajoute:

- C'était un faux numéro.

1. Qui dort?

a. Antoine.
b. Sa femme.
c. Tous les deux.
d. Personne ne dort.

2. Pourquoi la femme réveille son mari?

a. … parce qu'elle veut un verre d'eau.
b. … parce qu'elle ne veut pas se déranger pour aller voir.
c. … parce que son mari peut descendre l'escalier plus vite qu'elle.
d. … parce qu'elle sait que son mari ne dort pas.

Առաջադրանք II

Սույն առաջադրանքով ստուգվում է քննություն հանձնողի՝ տեքստի բովանդակության ընկալման ունակությունները: Ընտրված է երկու փոքր տեքստ, որտեղ բաց է թողնված երկուական նախադասություն: Քննություն հանձնողը պետք է առաջարկված նախադասություններից ընտրի ճիշտ տարբերակը:

Ընտրել այն նախադասությունները , որոնք համապատասխա-նում են բաց թողնված հատվածներին :

Lire les extraits donnés et cocher les espaces vides.

Pierre doit téléphoner à ses parents pour les prévenir qu'elle rentre tard ce soir. Il entre dans une cabine téléphonique. **……1……** . Il attend un peu. Il entend la sonnerie. **……2……..** . Pierre lui explique qu'il va sortir avec ses amis et rentrer plus tard que d'habitude. La conversation finie, il décroche le combiné.

1.

a. Il compose le numéro de ses parents.
b. Il regarde la photo de sa mère.
c. Il prend son stylo.
d. Il regarde son bloc-notes.

2.

a. Quelques secondes plus tard sa mère lui dit de revenir
b. Quelques secondes plus tard sa mère répond.
c. Quelques secondes plus tard sa mère lui dira de revenir.
d. Quelques heures plus tard sa mère répond.

Առաջադրանք III

Բազմակի ընտրության սկզբունքով կազմված այս առաջադրանքն ուղղված է դիմորդի բառաքերականական գիտելիքների ստուգմանը: Տրված է հայերեն նախադասություն. առաջարկված ֆրանսերեն տարբերակներից պետք է ընտրել այն, որը լիովին համապատասխանում է ներկայացված հայերեն նախադասությանը:

Ընտրել, ճիշտ թարգմանված տարբերակը:

Trouver la bonne traduction.

1. Նրանք բախտ ունեցան հանդիպել այդ մեծ գիտնականին ու երկար զրուցել նրա հետ:

a. Ils veulent rencontrer ce grand savant et longtemps parler avec lui.
b. Ils ont eu la chance de rencontrer ce grand savant et de longtemps parler avec lui.
c. Ils ont eu la chance de rencontrer ce grand chimiste et de longtemps parler avec lui.
d. La veille de leur départ ils ont pu enfin rencontrer ce grand savant.

Առաջադրանք IV

Սույն առաջադրանքը կատարելու համար պահանջվում է բայական ժամանակաձևերի, բառաքերականական տարբերակների իմացություն ու գործածությունը կապակցված տեքստում, ինչպես նաև վերջիններս զանազանելու կարողություն: Բայական ճիշտ ժամանակաձևն ընտրելու համար խորհուրդ ենք տալիս նախ ուշադրություն դարձնել, թե որ ժամանակով է շարադրված տեքստը, ծանոթանալ տեքստի ընդհանուր բովանդակությանը և միայն դրանից հետո ընտրել պատասխանը: Կարևոր է հստակ գիտենալ յուրաքանչյուր ժամանակաձևի կազմությունն ու կիրառությունը ֆրանսերենում: Ամբողջական տեքստը ընձեռում է հստակ կողմնորոշվելու հնարավորություն:

Տեքստի բացթողումները լրացնելու համար նշել տրված բառաքե-րականական տարբերակներից ճիշտը:
Cocher la bonne réponse pour compléter les espaces vides du texte.

Lorsque j'avais six ans j'**…1…** une magnifique image, dans un livre **…2…** la Forêt Vierge **…3…** s'appelait «Histoires vécues». Ça **… 4…** un serpent boa qui avalait un fauve.

On disait dans le livre: «Les serpents boas **… 5…** leur proie **… 6…** entière, sans la **… 7…** . Ensuite ils ne peuvent plus bouger et ils dorment pendant les six mois de **… 8…** digestion».

J'ai alors **…9…** réfléchi sur les aventures de la jungle et, à mon tour, j'ai réussi, avec un crayon **… 10…** couleur, **… 11…** tracer mon premier dessin.

J'ai montré mon chef d'œuvre aux **… 12…** personnes et je leur **… 13…** si mon dessin leur faisait **…14…** peur.

Elles m'ont répondu: «Pourquoi un chapeau ferait-il **…15…** ?»

Mon dessin ne représentait pas un chapeau.

1. a) avais vu	b) ai vu	c) verrai	d) voyais
2. a) à propos	b) pour	c) de	d) sur
3. a) qui	b) dont	c) que	d) auquel

Առաջադրանք V

Սույն առաջադրանքով ստուգվում է նախադասության անդամներին տրվող հարցերի իմացությունը: Հարցերից միայն մեկն է ճիշտ:

Գտնել նախադասության ընդգծված անդամին վերաբերող հարցը:
Trouver la question du terme souligné de la proposition.

1. **Nous attendons <u>le professeur</u>.**

a. Qu'est-ce qui nous attendons?
b. Qu'attendons-nous?
c. Qui attendons-nous?
d. Qu'est-ce que nous attendons?

Առաջադրանք VI

Տվյալ վարժությունն ուղղված է դպրոցական ծրագրով նախատեսված բառապաշարի ստուգմանը: Առաջարկված են բառեր կամ բառակապակցություններ, պետք է ընտրել այն տարբերակը, որը համապատասխանում է տրված բացատրությանը:

Ընտրել համապատասխան տարբերակը:
Cocher la bonne variante.

1. **Elle vient du ciel et arrose la terre.**

a. une pluie
b. une source
c. une chaleur
d. une étoile

Առաջադրանք VII

Պահաջվում է գտնել դերանունով փոխարինված բառը: Հայտնի է, որ ֆրանսերենին հատուկ է դերանունների լայն գործածությունը: Առաջադրանքում հանդիպում են անձնական, ցուցական, ստացական, ինչպես նաև ***en*** և ***y*** մակբայական դերանունները: Ուստի սխալներից խուսափելու համար պետք է լավ իմանալ ֆրանսերենի դերանունների գործածությունը:

Գտնել դերանունով փոխարինված բառը:
Retrouver le mot qui est remplacé par le pronom.

1. **Patrick m'<u>en</u> a offert.**

a. les fruits
b. le gâteau
c. du cola
d. la limonade

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

Առաջադրանք VIII

Ինչպես Ա մակարդակի I առաջադրանքում, այնպես էլ այստեղ, անհրաժեշտ է ուշադրությամբ ծանոթանալ տեքստին, որը Ա մակարդակում ներկայացված տեքստից տարբերվում է բար-դության աստիճանով, և ընտրել ճիշտ պատասխանը:

Կարդալ տեքստը և նշել յուրաքանչյուր ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը:
Lire le texte et cocher la bonne réponse de chaque question.

Le fer à cheval (ձիու պայտը)

Un paysan se mit un jour en route, suivi de son fils, le petit Thomas.

- Regarde, lui dit-il en chemin, voilà par terre un fer à cheval: ramasse-le et mets-le dans ta poche, nous le vendrons.

- Bah! reprit Thomas, qui n'aimait rien faire, cela ne vaut pas la peine (չարժե) qu'on se baisse pour le ramasser.

Le père ne répondit rien, prit le fer et le mit dans sa poche. Il le vendit pour quelques francs et en acheta des cerises.

Cela fait, ils continuèrent leur route. Le soleil était brûlant. On n'apercevait ni maisons, ni bois, ni sources. Thomas mourait de soif et suivait son père très difficilement.

Celui-ci laissa alors tomber une cerise, comme par hasard. Thomas la ramassa vite et porta à sa bouche. Quelques pas plus loin, le père laissa tomber une seconde cerise, que Thomas saisit et mangea immédiatement. Ceci continua jusqu'à la dernière cerise.

Alors le père se tourna vers son fils et lui dit en riant:

- Tu vois maintenant que si tu te baissais une seule fois pour ramasser le fer à cheval, tu ne serais pas obligé de le faire trente fois pour les cerises.

1. Pourquoi le père a dit à son fils de ramasser le fer à cheval?

a. … parce qu'un voisin en avait besoin.
b. … parce qu'il en manquait un à son cheval.
c. … parce qu'il pensait le vendre.
d. … parce que le fer était tout neuf

2. Pourquoi le petit Thomas n'a pas voulu ramasser le fer à cheval?

a. … parce qu'il était fatigué.
b. … parce qu'il était paresseux.
c. … parce qu'il en avait un autre dans sa poche.
d. … parce que le fer était sale.

3. Qu'est-ce qu'ils apercevaient autour d'eux?

a. Des maisons.
b. Des bois.
c. Des sources.
d. Rien.
e.

Առաջադրանք IX

Այս առաջադրանքը նույնն է, ինչ Ա մակարդակի IV առաջադրանքը, սակայն այն կատարելու համար պահանջվում է լեզվի առավել խոր իմացություն:

Նշել ճիշտ պատասխանը:
Cocher la bonne réponse.

La Fête de la Musique

La Fête de la Musique a lieu chaque année le 21 juin. Les jours sont longs en cette saison, et la Fête est devenue … **1** …

Dans les villes et les villages de France, les …**2** … sortent dans la rue et … **3**... de leurs instruments. Les rues se peuplent d'orchestres et de solistes. Sur les places publiques, devant les maisons des gens inconnus deviennent pour quelques heures les vedettes d'un public qui applaudit … **4** ... . On peut passer devant un orchestre …**5**… puis écouter un concerto de Beethoven, avant de … **6**… plus loin sur un air de rock. On … **7**… à la terrasse d'un café, un verre de bière devant soi et un morceau de jazz dans les oreilles.
Bref, c'est l'été, c'est la fête **…8…**, surtout pour la **…9…** .

La Fête de la Musique a connu un tel succès qu'elle s'est exportée dans de **…10…** pays de monde.

1. a) peuple
b) populaire
c) peupler
d) peuplé

2. a) musicaux
b) musiciens
c) musique
d) musical

Առաջադրանք X

Առաջադրանքն ընդգրկում է դպրոցական ծրագրով նախատեսված քերականական կարևոր երևույթներից մի քանիսը: Առաջադրանքը ճիշտ կատարելու համար պետք է ուշադիր կարդալ հարցերի պահանջները՝ համապատասխան սխալը գտնելու համար:

Տրված 4 նախադասություններից մեկը սխալ է: Նշել, թե ո՞ր նախադասության մեջ կա՝
L'une des quatre phrases n'est pas correcte. Cocher les cases où il y a:
շարադասության սխալ :
faute dans l'ordre des mots.

a. Tu n'arrives jamais en retard.
b. Les élèves ont donné leurs cahiers au professeur.
c. Paul dit bonjour à ses camarades.
d. Il le m'a donné avec plaisir.

Առաջադրանք XI

Պահանջվում է նշված տարբերակներից ընտրել նախադասության ճիշտ շարունակությունը: Նախադասության սկիզբը հուշում է այն միակ տարբերակը, որն ամենից տրամաբանականն է: Այն գտնելու համար պետք է զերծ մնալ ամեն կարգի երևակայական պատկերացումներից ու ենթադրություններից:

Ընտրել նախադասության շարունակությունը:
Choisir la suite de la phrase.

1. Je prends souvent le métro, …
   a. parce qu'il est loin de chez moi.
   b. parce qu'il est rapide.
   c. parce qu'il coûte cher.
   d. parce qu'il n'est pas confortable.

Առաջադրանք XII

Նման է նախորդ՝ XI առաջադրանքին, սակայն այս դեպքում տրված է նախադասության շարունակությունը, պետք է ընտրել սկիզբը:

Ընտրել նախադասության սկիզբը:
Choisir le début de la phrase.

2. … je ferais un grand voyage autour du monde.
   a. Si j'étais pauvre,
   b. Si je gagnais au loto,
   c. Si j'étais malade,
   d. Si j'étais petit

Բանավոր քննության պահանջները և գնահատման չափանիշները

Բանավոր քննության նպատակն է ստուգել դիմորդի լեզվական գիտելիքները և հաղորդակցական հմտությունները:

Բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է 2 հարցից.

1. Կարդալ, թարգմանել և պատասխանել հարցերին:
2. Զրույց առաջադրված թեմայով:

Բանավոր քննության պահանջներն են՝

1. Կարդալ ադապտացված գեղարվեստական գրքից մի հատված՝ դրսևորելով ընթերցանության կանոնների համապատասխան իմացություն և հնչյունաբանական գիտելիքների գործնական կիրառման հմտություններ: Գրավոր թարգմանել հատվածի նշված մասը բառարանի օգնությամբ, պատասխանել հատվածի բովանդակությանն ուղղված հարցերին:
2. Քերականորեն ճիշտ ձևակերպելով և տրամաբանորեն զարգացնելով արտահայտած մտքերը՝ զրուցել հետևյալ թեմաների շուրջ՝

1. ***La République d'Arménie.***
2. ***Ma ville natale, mon village natal.***
3. ***La France.***
4. ***Erévan – capitale de la République d'Arménie.***
5. ***Les grands hommes de la France, leurs œuvres.***
6. ***Faites le portrait physique et moral des membres de votre famille. Parlez de leurs occupations.***
7. ***Décrivez votre quartier et la maison où vous habitez.***
8. ***Faites le portrait physique et moral de votre ami(e) et parlez de ses préférences.***
9. ***Un événement inoubliable.***
10. ***Parlez de votre école, de vos études et de vos professeurs.***
11. ***Parlez de vos activités quotidiennes et de vos loisirs.***
12. ***Parlez d'un écrivain français et de son œuvre que vous préférez.***
13. ***Parlez des fêtes et de celle que vous préférez.***
14. ***2. Parlez de vos vacances d'été.***
15. ***Au supermarché.***
16. ***Parlez de vos vacances d'hiver.***
17. ***Parlez de vos distractions artistiques et de celle que vous préférez (théâtre, opéra, cinéma, télévision).***
18. ***Parlez d'un voyage ou d'une excursion.***
19. ***Les sports d'été et d'hiver.***
20. ***Les repas.***
21. ***Décrivez les saisons de l'année dans votre ville ou village.***
22. ***Parlez d'un anniversaire.***
23. ***Paris – capitale de la République française.***

24. La jeunesse d'aujourd'hui, ses occupations, ses préférences, ses loisirs.
25. Les bibliothèques et la lecture.

Բանավոր քննությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

1.	Ընթերցանություն	0-3 միավոր
2.	Թարգմանություն	0-5 միավոր
3.	Ընթերցված տեքստի ընկալում	0-6 միավոր
4.	Բանավոր հաղորդակցում	0-3 միավոր

Այսպիսով բանավոր քննությունը գնահատվում է 20 միավորա-նոց սանդղակով :

Գնահատականի բողոքարկման դեպքում դիմորդին տրվում 4-5 նախադասություն հայերենից ֆրանսերեն թարգմանելու համար :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան..... 3

Թեստի բովանդակությունը..... 4

Պատասխանների ձևաթղթի նմուշ 6

Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը..... 7

Խորհուրդներ և ցուցումներ..... 8

Առաջադրանքների նմուշներ 9

Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ լրացուցիչ 7500 օրինակ, 20 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
Գրքույկը վաճառքի ենթակա չէ:
www.atc.am